
ՎԵՐԺԻՆԵ ՍՎԱԶԼՅԱՆ, Հայոց ցեղասպանություն. ականատես վերապրողների վկայություններ, Ե., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2011, 880 էջ:

Verjiné Svazlian. The Armenian Genocide: Testimonies of the Eyewitness Survivors. Yerevan: "Gitoutyoun" Publishing House of NAS RA, 2011, 850 p.

Verjiné Svazlian. Ermeni Soykırımı: Hayatta Kalan Görgü Tanıklarının Anlattıkları. İstanbul: "Belge" Uluslararası Yayıncılık, 2011, 846 p.



Թերևս սխալված չենք լինի, եթե ասենք, որ Հայոց ցեղասպանության ականատես-վկա վերապրողների հուշերի ու վկայությունների հավաքագրումը Վերժինե Սվազլյանի հավատամքն է: Սկսած 1955 թ.՝ տասնամյակների ընթացքում Վ. Սվազլյանը Հայաստանում և Սփյուռքի տարբեր համայնքներում զբաղվել է Հայոց ցեղասպանության վերապրողների հուշերի ու վկայությունների հավաքման գրառման, ձայնագրման, տեսագրման և ուսումնասիրման աշխատանքով: Նա նույնիսկ միջազգային գիտաժողովներին (Ռուսաստան, Հունաստան, Ֆրանսիա, Ավստրիա, Գերմանիա, ԱՄՆ, Կանադա, Լիբանան, Սիրիա, Եգիպտոս, Թուրքիա) մասնակցելու կարճատև ժամանակը ծառայեցրել է այդ նպատակին:

ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի, ինչպես նաև Հնագիտության և ազգագրության ինստիտուտի համատեղ հրատարակությամբ լույս է տեսել բանասիրական գիտությունների դոկտոր Վերժինե Սվազլյանի «Հայոց ցեղասպանություն. Ականատես վերապրողների վկայություններ» 700 միավոր պատմափաստագրական սկզբնաղբյուրային նյութ պարունակող ստվարածավալ աշխատությունը՝ հայերեն, անգլերեն և թուրքերեն: Պետք է նշել, որ մինչ այդ, 2000 թ. արդեն իսկ լույս էր տեսել հեղինակի՝ նույն խորագրով հայերեն ժողովածուն, որը պարունակում էր 600 միավոր՝ ականատես վերապրողների վկայություններ: Անցած տասնամյակին հեղինակը լրացրել է այդ հիշողությունները՝ ավելացնելով նոր գրառած ևս 100 միավոր նյութեր: Վ. Սվազլյանի՝ երեք լեզուներով հրատարակած այս վերջին ստվարածավալ աշխատությունը՝ ժողովրդական վկայությունների տեղավայրային տարածվածությամբ, ինքնատիպ բնույթով, որակական ու քանակական հատկանիշներով, հայ իրականության մեջ եզակի երևույթ է:

Անշուշտ, հեղինակի համար բոլորովին էլ դյուրին չի եղել հայտնաբերել և, ամենակարևորը, խոսեցնել այդ մարդկանց, որոնք փաստորեն անցել են դժոխքի միջով և, ի հեճուկս բռնությունների ու անմարդկային պայմանների, ողջ են մնացել: Հայոց ցեղասպանության վերապրողների համար տառապանքների մասին պատմելը նշանակում էր վերհիշել բոլոր սարսափներն ու կրկին վերապրել այդ ամենը՝ ենթարկվելով հոգեկան ծանր ապրումների: Սակայն Վ. Սվազլյանին հաջողվել է հիմնավորել գործի կարևորու-

յունը և գտնել այնպիսի հնարքներ ու համոզիչ փաստարկներ, որ նրանք տեղի են տվել ու սկսել են հուզմունքով պատմել եղելությունը: Վ. Սվազյանը համոզված է, որ վերապրողները նույնպես քաջ գիտակցում էին իրենց խոսքերի ու ցուցմունք-վկայությունների կարևորությունը, ուստի և համաձայնվում էին խոսել իրենց ու իրենց հարազատների գլխով անցած դաժանությունների ու տառապանքների մասին: Հեղինակն ընդգծում է, որ վերապրողները բարոյական պատասխանատվություն և պարտքի բարձր գիտակցություն են դրսևորել իրենց պատմածի նկատմամբ. նրանցից շատերը նույնիսկ խաչակնքել են կամ երդվել, ճիշտ այնպես, ինչպես դատարանում են երդվում՝ ասել միայն ճշմարտությունը:

Աշխատությունն ունի կուռ կառուցվածք և հարուստ է գիտատեղեկատվական նյութերով: Ներածությունում հեղինակը հիմնավորում է աշխատանքի կարևորությունը, ներկայացնում նպատակը և նյութերի ընդգրկման վայրերը:

Հատորի երկու բաժիններից առաջինում՝ «Պատմաբանագիտական ուսումնասիրություն»-ում, հեղինակը գիտականորեն վերլուծում է հավաքված հսկայական փաստավավերագրական նյութը: Այս բաժինը բաղկացած է երկու ընդարձակ ենթաբաժիններից՝ «Ականատես-վկա վերապրողների հաղորդած պատմական վկայությունների ժանրային և տիպաբանական առանձնահատկությունները» և «Հայոց ցեղասպանության ընթացքը ըստ ականատես վերապրողների վկայությունների», որոնցում լուսաբանվում են ականատես-վերապրողների հուշերի ու վկայությունների ժանրային տեսակները և ընդգծվում՝ դրանց առանձնահատկությունները: Չափազանց կարևոր է հեղինակի կողմից ականատես-վերապրողների հուշերը և վկայությունները համադրելը Հայոց ցեղասպանության ընթացքին, քանզի նման համադրությունը թույլ է տալիս Մեծ եղեռնի ընթացքը և առանձին դեպքերի իրողությունը հիմնավորել նաև ժողովրդական բանավոր վկայություններով:

Աշխատության երկրորդ՝ «Պատմական սկզբնաղբյուրներ» բաժինը ներկայացնում է ականատես-վերապրողների հուշերն ու վկայությունները (700 միավոր), որոնք, ըստ տեղավայրերի և տարիքային առանձնահատկությունների, խմբավորված են «Պատմական հուշ-վկայություններ» (315 միավոր), «Պատմական գրույց-վկայություններ» (70 միավոր) և «Պատմական երգ-վկայություններ» (315 միավոր) ծավալուն ենթաբաժիններում:

Ականատես-վկաների հուշ-վկայություններն ընդգրկում են տարբեր թեմաներ: Ընթերցողը կարող է պատկերացում կազմել հայկական բնաշխարհի գեղեցկության, հայերի նահապետական կենցաղի ու սովորույթների, ինչպես նաև՝ բնօրրանում նրանց կյանքի պայմանների մասին: Հուշ-վկայությունները տեղեկություններ են պարունակում նաև համիդյան կոտորածների, երիտթուրքերի կառավարության պարագլուխների (Թալեաթ, Էնվեր, Ջեմալ, Նազըմ, Բեհաէդդին Շաքիր և այլք)՝ հայերի հանդեպ գործադրած դաժանությունների (հարկահավաք, զորահավաք, զինահավաք, ողջակեզ, ջարդ, կոտորած և այլն), դեպի Միջագետքի անապատների համակենտրոնացման վայրեր (Դեյր էլ Ջոր, Ռաս ու Այն, Ռաքքա, Մեսքենե, Մուրուճ և այլուր) հայերի բռնի տեղահանությունների, նրանց կրած անասելի տառապանքների (քայլք՝ ուժասպառվելու աստիճան, ծարավ, քաղց, համաճարակ, մահվան սարսափ և այլն), ինչպես նաև արևմտահայերի մղած ինքնապաշտպանական մարտերի մասին (Վանի հերոսամարտ, Շատախի, Շապին-Գարահիսարի, Սասունի գոյամարտեր, Մուսա լեռան, Ուրֆայի, իսկ ավելի ուշ՝ Այնթապի ու Հաճընի հերոսամարտեր և այլն):

Պետք է նշել, որ հեղինակը չի բավարարվել միայն ականատես-վկաների հուշերն ու վկայությունները հավաքագրելով ու համակարգելով, այլև վերլուծել և ուսումնասիրել է՝ դրանք համեմատելով հայտնի պատմական իրադարձությունների հետ, և եկել է այն եզրակացության, որ դրանք «դույզն-ինչ կասկածի տեղիք չեն տալիս» (էջ 16): Դեռ ավելին՝ հուշ-վկայություններում և գրույց-վկայություններում հիշատակվում են նաև նախկինում անհայտ հերոս հայորդիներ, որոնք պայքարել են ընդդեմ բռնության, նահատակվել, նաև՝ դիմակայել ու վերապրել: Հուշ-վկայություններով և գրույց-վկայություններով կարելի է ոչ միայն վերականգնել Հայոց ցեղասպանության ժամանակագրական ողջ ընթացքը և վերահաստատել դրանց եղելությունը, այլև բացահայտել նոր մանրամասներ ու փաստեր՝ կապված այս կամ այն իրադարձության հետ:

Առանձնապես ուշադրության է արժանի «Պատմական երգ-վկայությունների» ենթաբաժինը, որը, ելնելով թեմատիկ բազմազանությունից, հեղինակը խմբավորել է հետևյալ կերպ՝ ա. Զորահավաքի, զինահավաքի և բանտարկյալի երգեր, բ. Տեղահանության և կոտորածի երգեր, գ. Որդեկորույս մայրերի, որբի և որբանոցի երգեր, դ. Հայրենասիրական և հերոսամարտերի երգեր, ե. Բռնագավթված Հայրենիքի և պահանջատիրության երգեր, գ. Պատմական երգերի նոտագրություններ: Հատկանշական է, որ վերապրողների հաղորդած նույնիսկ հայերեն և հատկապես թուրքալեզու երգերում մեղադրանք է հնչում դահիճների դեմ, և խոսվում է ոչ միայն տառապանքի ու ցավի, այլև հերոսական դիմադրության և, որն ամենակարևորն է, պահանջատիրության մասին:

Աշխատությունն օժտված է արժեքավոր գիտական տեղեկատվությամբ, ունի դժվար հասկանալի և օտարամույժ բառերի բառարան, պատմական դեպքերի ու դեմքերի մասին մանրակրկիտ ծանոթագրություններ. այդ ամենը զգալիորեն կհեշտացնի հետազոտողների գործը:

«Փաստագրում» բաժնում հաստուկ աղյուսակով տրված է ականատես վերապրողների և նրանց հաղորդած վկայությունների բնույթը (ձեռագիր, ձայնագրություն, տեսագրություն), արխիվային ֆոնդի թիվը, բնագրի լեզուն, վերապրողի անուն-ազգանունը, ծննդյան վայրը (նյութի հայրենիքը), նյութի գրանցման վայրը և տարեթիվը: Աշխատությունը նմանատիպ գործերից շահեկանորեն տարբերվում է նրանով, որ անձնանունների ու տեղանունների ցուցիչներից զատ, իբրև նորույթ կիրառվել է նաև բնագրերի թեմատիկ վերլուծությունը, որը տեսանելի ու մատչելի ձևով հնարավորություն կընձեռի մասնագետներին հանրագիտարանի նման ծանոթանալ սկզբնաղբյուրներում առկա բազմաբնույթ թեմաներին (օրինակ՝ բնօրրանի նկարագրություն, կենցաղ, տեղահանություն, բռնագաղթ, ողջակեզ, կոտորած, առևանգում, թլփատում, իսլամացում, երիտթուրքական դաժանությունների աներևակայելի բազմապիսի ձևեր, մեծ տերությունների խարդավանքներ և այլն):

Աշխատության վերջում ներկայացված են Հայոց ցեղասպանության ականատես վերապրողների և նրանց հաջորդ սերունդների լուսանկարները (288 միավոր), ըստ իրենց ծննդյան տարեթվերի և վայրերի:

Աշխատությունն ունի ամփոփումներ՝ վեց լեզվով (անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն, թուրքերեն, ռուսերեն և հայերեն), ինչը օտարալեզու ընթերցողներին հնարավորություն կտա ծանոթանալ ու պատկերացում կազմել աշխատանքի կարևորագույն հիմնադրույթների մասին:

Այս մեծածավալ աշխատության անգլերենի թարգմանիչներն են՝ Տիգրան Ծուլիկյանը և Անահիտ Պողիկյան-Դարբինյանը, թուրքերենինը՝ Տիգրան Տեր-Ողորմիաջյանը և Պետրոս Չավիկյանը:

Հայերեն և անգլերեն հաստորների վերջում տեղադրված է «Սվազյան գերդաստանի հավատամքը» վավերագրական տեսաֆիլմը, որը նվիրված է XX դ. ընթացքում Սվազյան գերդաստանի իրար հաջորդող երեք սերնդի ազգանպաստ և հայրենանպաստ գործունեությանը՝ ընդգրկելով հայ ժողովրդի համար բախտորոշ մի ժամանակաշրջան: Ֆիլմում օգտագործված են բացառիկ արժեք ներկայացնող արխիվային տեսանյութեր և Հայոց ցեղասպանության ականատեսների կենդանի վկայություններ: Ֆիլմի կոտ և բովանդակալից սցենարի հեղինակն ու ռեժիսորն է ճանաչված լրագրող, բազմամյա վաստակի տեր Լաուրա Մինասյանը, երաժշտական ձևավորողը՝ Կարեն Խառատյանը, տեքստը կարդում է Հայաստանի վաստակավոր արտիստ Սարգիս Նաջարյանը:

Կարևոր է նշել այն հանգամանքը, որ ինքը՝ հեղինակը, հակված չէ սեփական աշխատանքը գնահատել իբրև լոկ վաստագրություն, այլ ընդգծում է ուսումնասիրության մասնավորապես գործնական-կիրառական ուղղվածությունը: Վ. Սվազյանը գրում է. «Ինչպես ամեն մի հանցագործություն բացահայտելիս որոշիչ են վկաների ցուցմունքները, նույնպես և այս պարագայում պետք է հենվել նաև ականատես վերապրողների վկայությունների վրա, որոնցից յուրաքանչյուրը իրավաբանական տեսակետից ապացուցողական նշանակություն ունի Հայ Դատի արդարացի լուծման և Հայոց ցեղասպանության ճանաչման գործում» (էջ 7): Այսպիսով, հեղինակը Հայոց ցեղասպանության ականատես վերապրողներին միանգամայն իրավացիորեն համարում է այդ հանցագործության վկաներ, որոնց հաղորդած ցուցմունք-վկայությունները տվյալ պարագայում չափազանց կարևոր են: Եվ քանի որ ցեղասպանությունը միջազգային իրավունքի տեսակետից համարվում է մարդկության դեմ կատարված հանցագործություն, ապա պետք է համաձայնվենք հեղինակի այն կարծիքին, որ տվյալ քաղաքական զանգվածային ոճրագործության պարագայում իբրև վկա է հանդես գալիս հենց ինքը՝ տուժող հայ ժողովուրդը, ի դեմս այն ականատես վերապրողների, որոնք իրենց ցուցմունք-վկայություններով հստակ մեղադրանք են առաջադրում հանցագործ պետության՝ Օսմանյան կայսրության իրավահաջորդին՝ Թուրքիայի Հանրապետությանը:

Ինքնին հասկանալի է, որ ցուցմունք-վկայություն տվողները բավական տարեց մարդիկ էին, և նրանցից շատերն արդեն չկան, հետևաբար անչափ արժևորվում է Վ. Սվազյանի կատարած շնորհակալ գործը: Հեղինակը փրկել ու հաջորդ սերունդներին է փոխանցել, ինչպես նաև տարբեր լեզուներով աշխարհին ներկայացրել ականատես վերապրողների հույժ կարևոր ցուցմունք-վկայությունները, որոնցով սույն աշխատությունը կարելի է համարել Հայոց ցեղասպանության միջազգային քրեական գործի այն հաստորներից մեկը, որը մի օր կներկայացվի միջազգային դատարան և կարևոր հիմք կդառնա Հայոց պահանջատիրական դատի արդարացի լուծման համար:

ՄԱՐՈՒՔՅԱՆ Ա. Յ.

Պատմական գիտությունների թեկնածու